ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

<<08>> << հուլիս >> 2014
ք. Եղեգնաձոր

N 57

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ և 3.1-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի, << Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6)-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 1510-Ն որոշման 52-րդ, 53-րդ և 54-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների 2014 թվականի առաջին կիսամյակի կատարողականների արդյունքները.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության բարձրագույն և գլխավոր պաշտոնների 1-ին ենթախմբի, ինչպես նաև աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին պարգևատրել Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի պահպանման ծախսերի <<Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրման>> ֆոնդից /հավելված 1/:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Է.ՂԱՋԱՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2014 թ հունվարի 08ի N57կարգադրության

Ց Ո Ւ Ց Ա Կ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության բարձրագույն և գլխավոր պաշտոնների 1-ին ենթախմբի, ինչպես նաև աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների

h/h	Ազգանուն անուն	Պաշտոնը	Կատարողականի արդյունք o/o
1.	Խուդավերդյան Վանիկ	Աշխատակազմի ղեկավարի տեղակալ	100
2.	Հայրապետյան Ռազմիկ	Ֆին. և սոց. տնտ. զարգ. վարչ. պետ	100
3.	Հովսեփյան Ազատ	Քաղաքաշին. վարչ. պետ	100
4.	Գևորգյան Խաչիկ	Առողջապահ. և սոց.ապահ. վարչ. պետ	100
5.	Ղազարյան Արփիար	Կրթության, մշակ. և սպորտի վարչ. պետ	100
6.	Սիմոնյան Նորայր	ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչ. պետ պետ	100
7.	Կարապետյան Հայկ	Քարտուղարության պետ	100
8.	Ներսիսյան Մարատ	Գյուղատնտեսության և բնապահպանության վարչ. պետ	100
9.	Կարապետյան Վասակ	Ներքին աուդիտի բաժնի պետ	100
10.	Կարապետյան Նորայր	Ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ	100
11.	Ավետիսյան Հասմիկ	Ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ	100

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ